

Ռ. Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԴԱՏԱՎՃԻՌԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱԿՏ

Սոցիալիստական օրինականության պահպանությունը, սովետական օրենքները կատարելու խստիվ պահանջը հանդիսանում են մեր երկրի ամրապնդման և հետագա զարգացման կարևորագույն նախապայմանները:

ՍՍՀՄ-ի աշխատավորներն իրենց ամենօրյա գործունեությամբ, աշխատանքի նվիրվածությամբ լի են կոմունիստական կուսակցության ծրագրով նախատեսված կոմունիզմի կառուցման խնդիրներն իրականացնելու, մեր օրինականությունը խստորեն պահպանելու վճռականությամբ:

Սովետական օրենքների խստիվ պահպանությունը, նրանց անշեղ կատարումը մեր պետության զարգացման բոլոր ժամանակաշրջաններում էլ եղել է կոմունիստական կուսակցության կարևորագույն պահանջը:

Ժողովրդական կոմիսարների սովետի առաջին դեկրետները կոչ էին անում և պահանջում խստորեն պահպանելու օրենքը, նշելով, որ այն հանդիսանում է նորաստեղծ սովետական իշխանության ամրապնդման ամենահիմնական նախապայմաններից մեկը:

Հոկտեմբերյան մեծ հեղափոխության հաղթանակի հենց առաջին իսկ օրերից Վ. Ի. Լենինի անմիջական նախաձեռնությամբ մեր երկրը ձեռնամուխ եղավ սոցիալիստական օրինականության պահպանմանը վերաբերող խնդիրների մշակմանը և պետական իշխանության այն օրգանների ստեղծմանը, որոնց դժրը վճռական էր օրինականության պահպանությունն ամրապնդելու գործում: Հայտնի է, թե ինչպիսի մեծ նշանակություն էր տալիս Վ. Ի. Լենինը սովետական դատարանի գործունեությանը:

Իր աշխատություններում նա ամենայն հստակությամբ մեր ժողովրդին ներկայացրեց նորաստեղծ սովետական դատարանի առջև ծառացած խնդիրները:

«Սովետական իշխանության հերթական խնդիրները սահմանված չեն նախնական ուրվագրում Վ. Ի. Լենինը գրում էր. «Նոր դատարանը ամենից առաջ հարկավոր էր շահագործողների դեմ պայքարելու համար, որոնք փորձում էին վերականգնել իրենց տիրապետությունը, կամ պաշտպանել իրենց արտոնությունները, կամ ծածուկ անցկացնել, խարեությամբ ստանալ այդ արտոնությունների այս կամ այն մասնիկը: Սակայն, բացի դրանից, դատարանների վրա, եթե նրանք իրոք կազմակերպված են սովետական հիմնարկությունների սկզբունքով, դրվում է մի այլ ավելի կարևոր խնդիր: Այդ խնդիրն է պահպանել աշխատավորության կարգապահության և ինքնակարգապահության ամենախիստ գործադրումը: Մենք ծիծաղելի ուտոպիստներ կլինենք, եթե երևակայենք, որ նման մի խնդիր իրագործելի է բուրժուազիայի իշխանության անկման հաջորդ օրը, այսինքն՝ կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու առաջին ստադիայում, կամ՝ առանց հարկադրանքի: Առանց հարկադրանքի այդպիսի խնդիրը միանգամից անիրագործելի է: Մեզ հարկավոր է պետություն, մեզ հարկավոր է հարկադրանք: Պրոլետարական պետության այդպիսի հարկադրանքն իրագործող օրգանը պետք է լինեն սովետական դատարանները: Եվ նրանց վրա դրվում է բնակչությանը աշխատանքային կարգապահության ոգով դաստիարակելու հսկայական խնդիրը»:

Սովետական դատարանն իր ներկա գործունեությամբ առաջին հերթին իրականացնում է սոցիալիստական իրավունքի դաստիարակչական կոդեքս: Այդ իմաստով էլ անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր աուսնձին դեպքում դատելիս, վճիռ կամ որոշում կայացնելիս դատարաններն իրենց գործունեությունն ուղղեն դեպի սովետական սոցիալիստական օրինականության խստիվ պահպանությունը, դեպի օրենքները սրբությամբ կատարելու անսասան պահանջը:

Մեր դատարանը կոչված է աջակցելու նոր կյանքի, կոմունիզմի կառուցմանը, Սովետական Միության կոմունիստական կուսակցության ծրագրի իրագործմանը: Դրան պետք է ծառայի մեր դատարանի յուրաքանչյուր դատավճիռ, վճիռ կամ որոշում:

Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 257—258:

«Դատավճիռ հանուն Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության», «Դատավճիռ հանուն Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության» (կամ հանուն այն սովետական սոցիալիստական հանրապետության, որտեղ գործում է դատարանը), — այսպես է սկսվում սովետական դատարանի այն վճռի հրապարակումը, որը կայացվել է դատական նիստում քրեական գործով ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության և նրա նկատմամբ պատիժ կիրառելու կամ չկիրառելու հարցով:

Սովետական արդարադատության այս կարևորագույն փաստաթղթի հրապարակումը հանուն մեր պետության, պայմանավորված է անմիջականորեն այն խնդիրներով ու նպատակներով, որոնք դրված են մեր արդարադատության առջև:

Սովետական արդարադատությունը կոչված է ամեն տեսակի ոտնձգություններից պաշտպանելու՝ ՍՍՀՄ սահմանադրությունով ամրապնդված հասարակական և պետական կարգը, տնտեսության սոցիալիստական սիստեմը և սոցիալիստական սեփականությունը, քաղաքացիների՝ ՍՍՀՄ և Միութենական հանրապետությունների սահմանադրություններով երաշխավորված քաղաքական, աշխատանքային, բնակարանային և անձնական ու գույքային այլ իրավունքներն ու շահերն ապահովելու, պետական հիմնարկների, ձեռնարկությունների, կոլտնտեսությունների և այլ հասարակական կազմակերպությունների իրավունքներն ու օրենքով պաշտպանվող շահերը: Սովետական արդարադատության խնդիրն է՝ ապահովել օրենքների ճշգրիտ և անշեղ կատարումը բոլոր հիմնարկների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների կողմից:

Իր ամբողջ գործունեությամբ սովետական դատարանը քաղաքացիներին դաստիարակում է հայրենիքին և կոմունիզմի գործին նվիրվածության ոգով, սովետական օրենքները ճշգրիտ և անշեղորեն կատարելու ոգով, սոցիալիստական սեփականությանը խնամքով վերաբերվելու, քաղաքացիների իրավունքները, պատիվն ու արժանապատվությունը, սոցիալիստական համակեցության կանոնները հարգելու ոգով:

Կիրառելով քրեական պատժի միջոցներ, դատարանը ոչ միայն պատժում է հանցագործներին, այլև նպատակ ունի ուղղելու և վերադաստիարակելու նրանց:

Մեր արդարադատության, դատարանի այս խնդիրների ու նպատակների առկայությամբ էլ պայմանավորված է պետության կողմից դատարանին լիազորելը դատավճիռ արձակելու հանուն ՍՍՀՄ-ի, կամ հանուն Միութենական հանրապետության:

Դատավճիռ կայացնելը դատարանի գործունեության ամենապատասխանատու բնագավառներից մեկն է: Դատավճիռն այն ակտն է, որով հանրագումարի է բերվում դատարանում քրեական գործի ամբողջ քննությունը, ուստի դատավճիռ կայացնելը պայմանավորված լինելով արդարադատության նպատակներով, միաժամանակ խիստ պայմանավորված է սովետական քրեական դատավարության խնդիրներով, իսկ մեր քրեական դատավարության խնդիրներն են՝ հանցագործությունների արագ և լրիվ բացումը, հանցավորների մերկացումը և օրենքի ճիշտ կիրառման ապահովումը այն հաշվով, որպեսզի հանցագործություն կատարած յուրաքանչյուր ոք ենթարկվի արդարացի պատժի և ոչ մի անմեղ մարդ քրեական պատասխանատվության չենթարկվի ու չդատապարտվի:

Սրանք են այն հիմնական, ընդհանուր դրույթները, որոնցից պետք է բխի դատավճռի ոգին, նրա ամբողջ էությունը: Այդ բոլորից ելնելով կարելի է դատավճիռը բնորոշել հետևյալ կերպ: Դատավճիռ է կոչվում դատական նիստում մեղավոր հանցագործի և անմեղության կամ անմեղության մասին դատաբանի կայացրած որոշումը:

Միութենական բոլոր հանրապետությունների քրեական դատավորության օրենսգրքերում հատուկ գլուխ է հատկացված դատավճիռը կայացնելու հարցերին: ՀՍՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ գլուխը, որն ընդգրկում է 290—313 հոդվածները, վերաբերում է դատավճիռը կայացնելու հարցերին և պարտադիր է մեր հանրապետության բոլոր դատարանների գործունեության համար:

Անդրադառնալով այդ հոդվածաշարում նախատեսված այն կարևորագույն սկզբունքներին ու պահանջներին, որոնք դրվում են դատավճիռ կայացնող դատարանի առջև:

Ընտրված թեմայի հարցերի շարադրանքը կոնկրետացնելու, հարցերի մեկնաբանումն ավելի անմիջական դարձնելու իմաստով վերցնում ենք մեր հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածաշարը (28-րդ գլուխը, որը վերնագրված է «Դատավճիռ կայացնելը»):

ՀՍՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածը ազդարարում է, որ մեր հանրապետության ժողովրդական դատարանները և Հայկական ՍՍՀ Դերագույն դատարանը դատավճիռ



կայացնում են հանուն Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության, Մեր հանրապետության տերիտորիայում գործող պինվորական տրիրունայինները դատավճիռը կայացնում են հանուն Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության: Այս հարցի նշանակությանը մենք արդեն անդրադարձանք սկզբում, սակայն կրկնություն չենք համարում նշելու, որ դատավճիռը հանուն մեր պետության և հանրապետության կայացնելը նշանակում է, դատավճռով, հանձին սովետական դատարանի, մեր պետությունը արտահայտում է իր վերաբերմունքը դեպի այն գործողությունը, որը դարձել է դատարանում քննության առարկա, դեպի այն անձը, որը մեղադրվում է այդ գործողության մեջ:

Դատավճիռը կայացնելիս ամենակարևոր հարցերից մեկը ՍՍՀՄ սահմանադրության 112-րդ հոդվածի դրույթն է — դատավորներն անկախ են, ենթարկվում են միայն օրենքին, Դատավորների անկախությունը և ենթարկվելը միայն օրենքին հանդիսանում է սովետական դատարանի գործունեության միասնական սահմանադրական սկզբունքը: Այս սահմանադրական սկզբունքը ի նկատի ունի սոցիալիստական օրինականության խստիվ պահպանությունը և տարածվում է դատարանի ամբողջ գործունեության վրա: Այն պրակտիկորեն նշանակում է, որ դատավորները յուրաքանչյուր դատավճիռ կայացնելիս ելնում են օրենքի պահանջներից, ապացույցները զննատու մեն իրենց ներքին համոզմունքով, որը պետք է հիմնված լինի գործի իր ամբողջությամբ վերցրած, բոլոր հանգամանքների բավականապես, լրիվ և օբյեկտիվ քննարկման ու ստուգման վրա՝ դեկլարվելով օրենքով և սոցիալիստական իրավագիտակցությամբ:

Պետությունը ոչ միայն ազդարարում է դատավորների անկախության սկզբունքը, այլև ապահովում է այն դատավարական որոշակի երաշխիքներով: Ամենից առաջ դատավորների անկախությունը ապահովվում է նրանով, որ դատավարական օրենքները օժտում են նրանց քրեական գործերը լուծելու լիիշխանությամբ, որի մասին հստակ շարադրված է ՀՍՍՀ քր. դատ. օր-ի 291—294 հոդվածներում:

Դատավորների անկախության դատավարական երաշխիքների թվին պետք է դասել խորհրդակցական սենյակի զաղտնիքը, դատավորների խորհրդակցության զաղտնիությունը: Քրեական դատավարության օրենսգրքի 292 հոդվածը նշում է, որ դատարանը դատավճիռը կայացնում է խորհրդակցական սենյակում: Խորհրդակցական սենյակում կարող են գտնվել միայն տվյալ գործով դատարանի կազմի մեջ մտնող դատավորները: Խորհրդակցական սենյակի զաղտնիության խախտումը անառակելիորեն հանդիսանում է դատավճռի բեկանման հիմք:

«Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված...», ՀՍՍՀ քր. դատ. օր-ի 293 հոդվածի սյուս պահանջը հանդիսանում է մեր արդարադատության կարևորագույն պահանջներից մեկը:

Երբ օրենքը պահանջում է, որ դատավճիռը պետք է լինի օրինական, այդ նշանակում է, որ այն պետք է կայացվի օրենքի ճշգրիտ կիրառմամբ, այն պետք է հիմնվի օրենքի վրա: Քր. դատ. օր-ի 293 հոդվածի այն պահանջը, որ դատավճիռը պետք է լինի հիմնավորված, այդ նշանակում է, որ այն պետք է ճիշտ կերպով պարզի գործի փաստերը, նրա փաստական հանգամանքները իրականությանը համապատասխան, այսինքն դատավճռի հիմքում պետք է զրվի ճշմարտությունն ու իսկությունը, այն, ինչ իրականում տեղի է ունեցել:

Քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ հոդվածի պահանջները սերտորեն կապված են օրենսգրքի 294-րդ հոդվածի պահանջների հետ:

Դատավճռի օրինական ու հիմնավորված լինելու պահանջի հետ կապված որոշ տեսական ու պրակտիկ կողմերն ավելի հստակ պատկերացնելու համար անդրադառնանք այն հարցերին, որոնց լուծումը անհրաժեշտ է դատավճիռը կայացնելիս և որոնցով էլ պայմանավորված է յուրաքանչյուր դատավճռի օրինական ու հիմնավորված լինելը: Այդ հարցերը շատ պարզ շարադրված են քր. դատ. օր-ի 294-րդ հոդվածում: Այն է՝

1. Տեղի ունեցել է արդյոք այն արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է ամբաստանյալը.
2. Այդ արարքը պարունակում է արդյոք հանցակազմ և քրեական օրենսգրքի որ հոդվածով կամ օրենքով է այն նախատեսված:
3. Ամբաստանյալը մեղավոր է արդյոք այդ հանցագործությունը կատարելու մեջ.
4. Ամբաստանյալը ենթակա է արդյոք պատժի իր կատարած հանցագործության համար.
5. Հատկապես ինչ պատժ պետք է նշանակվի ամբաստանյալի նկատմամբ, ամբաստանյալը արդյոք պետք է կրի այդ պատժը և այն ուղղիչ աշխատանքային զաղութի տեսակը, որտեղ նա պետք է կրի պատժի ժամկետը...

Այս հինգ հարցերի քննարկումն ու լուծումն է, որ ապահովում է դատավճռի օրինական ու հիմնավորված լինելը:

Այս հարցերի լուծման տեսանկյունից էլ դատավճիռները կարող են լինել երկու տեսակ.

1. Մեղադրական դատավճիռ.

2. Արդարացման դատավճիռ:

Դատավճռի օրինական, հիմնավորված լինելը հանդիսանում է սովետական քրեական դատավարության հիմնական պահանջներից մեկը:

Սովետական Միության կոմունիստական կուսակցության XX—XXI—XXII—XXIII համագումարները առանձնակի խստությամբ առաջ քաշեցին սոցիալիստական օրինականության պահպանման, նրա լենինյան սկզբունքներն անաղարտ պահելու հարցերը: Կուսակցությունը ճշմարտացիորեն պատմելով մեր ժողովրդին անհատի պաշտամունքի վնասակար հետևանքների մասին, միաժամանակ նրա հետևանքները հաղթահարելու կուրս վերցրեց: Ինչքան էլ բարդ լինի ճշմարտացիությանն ու իսկությանը հասնելու հարցը, դարձյալ դատավճռի օրինական և հիմնավորված լինելու պահանջը պետք է մնա անսասան: Հարցի նման մոտեցումը մեզ բերում է այն իրականությունը, որ ոչ մի հանցագործ չպետք է խուսափի արժանի պատժից և որ ամենից կարևորն է՝ ոչ մի անմեղ քաղաքացի չպետք է պատժվի, իսկ անհիմն դատապարտության յուրաքանչյուր դեպք պետք է պատշաճ կարգով քննության առարկա դառնա: Այս է բոլոր ժամանակների սոցիալիստական արդարադատության լենինյան պահանջը:

Անձի մեղավորության հարցը լուծելիս առանձնակի կարևորություն է ստանում քրեական դատավարության հիմունքների 7-րդ հոդվածի այն պահանջը, որ ոչ մեկը չի կարող ճանաչվել մեղավոր և ենթարկվել քրեական պատժի այլ կերպ քան դատավճռով:

Վերջերս սովետական իրավագիտության որոշ տեսաբաններ (պրոֆ. Ի. Ի. Կարպեց, իրավ. դիտ. թեկն. Գ. Ս. Մինկովսկի) արտահայտում են այն կարծիքը, որ մարդը կարող է մեղավոր ճանաչվել ոչ միայն դատարանի դատավճռով, այլև այլ քրեական դատավարական ակտով: Երանք գտնում են, որ առանց պատիժ նշանակելու մեղադրյալին կարող են մեղավոր ճանաչել նաև քննիչը, դատախազը, հետաքննողը:

Մենք այս հարցում չենք բաժանում նրանց կարծիքը և գտնում ենք, որ այդ պաշտոնատար անձինք չեն կարող անձին մեղավոր ճանաչել: Այս հարցում մենք բաժանում ենք պրոֆ. Մ. Ս. Ստրոգովիչի կարծիքը:

Կասկած չի կարող լինել, որ մեղադրյալի մեղավորության մասին քննիչը, հետաքննողը կազմելով մեղադրական եզրակացություն, իսկ դատախազը հաստատելով այն, արտահայտում են իրենց կարծիքը, հանգում են այն եզրակացության, որ մեղադրյալը մեղավոր է, սակայն այդ դեռ չի նշանակում, որ տվյալ մեղադրյալն իրոք հանցավոր է: Այդ օրգաններն իրենց եզրակացությունը ներկայացնում են դատարանին և միայն դատարանն է, որ որոշում է հանցավոր ճանաչելու հարցը:

Իսկ ինչպես դիտել այն դեպքերը, երբ մեղադրյալի նկատմամբ քրեական գործը քննիչի, դատախազի կամ հետաքննողի կողմից կարճվում է և մեղադրյալի հետագա դատախարակությունը հանձնվում է կոլեկտիվին: Կասկածից վեր է, որ քննիչը, դատախազը կամ հետաքննող օրգանը քրեական գործը այդ մոտիվով կարճելիս հանգում են այն եզրակացության, որ մեղադրյալը մեղավոր է, բայց դա դեռ չի նշանակում մեղադրյալին դատապարտել: Ժիշտ է պրոֆեսոր Մ. Ս. Ստրոգովիչը, երբ նշում է, որ «մեղադրյալին ճանաչել մեղավոր—այդ նշանակում է մեղադրյալի նկատմամբ կայացնել այնպիսի որոշում, որն ունի համընդհանուր պարտադիր նշանակություն, համընդհանուր պարտադիր ուժ: Այդպես էլ տեղի է ունենում, երբ դատարանը կայացնում է մեղադրական դատավճիռ: Եթե դատարանի դատավճռով ամբաստանյալը ճանաչվում է մեղավոր, այդ մարդը դիտվում է մեղավոր և դատարանի այդ վճիռը ունի համընդհանուր պարտադիր ուժ»<sup>2</sup>:

Գրությունն այլ է մեղադրյալին կոլեկտիվի դատախարակությանը հանձնելու կապակցությամբ գործը կարճելիս: Նման կարճումը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ մեղադրյալը համաձայն է և այն դեպքում, երբ մեղադրյալն իրեն մեղավոր է ճանաչում: Այդ մասին ուղղակիորեն ասված է օրենքում:

Երբ մեղադրյալը պահանջում է գործը քննել դատարանում, այդ նշանակում է, որ նա իրեն մեղավոր չի ճանաչում (կոլեկտիվի դատախարակությանը հանձնել շահմաձայնվելու դեպքում), և պահանջում է դատավճռով հաստատել իր անմեղությունը, իսկ այս դեպքում նախաքննական

2 «Պաշտպանության հարցերը քրեական գործերում», հոդվածների ժողովածու, 1967, էջ 53:



օրգանը պարտավոր է գործը դատարան ուղարկելու, իսկ դատարանը պարտավոր է գործով դատավճիռ արձակելու, համընդհանուր պարտադիր ուժ ունեցող պրոցեսուալ ակտով որոշելու անձի մեղավորության կամ անմեղության հարցը, իսկ այդպիսի ակտ կարող է լինել միայն դատավճիռը:

«Դատավորները գործում եղած ապացույցները զննատույնում են իրենց ներքին համոզմունքով, որը պետք է հիմնված լինի գործի՝ իր ամբողջությամբ վերցրած, բոլոր հանգամանքների լրացման, լրիվ և ղեկավարվելով օրենքով և սոցիալիստական իրավագիտակցությամբ»:

Որենքի այս պահանջը միաժամանակ նշանակում է, որ դատավճիռը կայացնելիս դատարանը պետք է ելնի սոցիալիստական իրավունքի և բարոյականության փոխներգործության սկզբունքից, իսկ այդ սկզբունքը քրեական գործերի քննության ժամանակ ավելի ցայտուն է արտահայտվում: Դատավճիռը կայացնելիս հաշվի առնելով գործի ամբողջական օբյեկտիվ հանգամանքները, բազմակողմանի քննարկելով այդ հանգամանքները և շնտեսելով սոցիալիստական իրավագիտակցության պահանջները, դատարանը կհանգի այն ճիշտ եզրակացության, որ նույն տեսակի հանցանքը երկու տարբեր դեպքերում կարող է կատարվել ոչ միատեսակ ուղի վրա, կարող է ունենալ տարբեր դրդապատճառ:

ՍՍՀՄ Գերագույն դատարանի պլենումը 1962 թ. հուլիսի 31-ի «Դատարանների կողմից քրեական պատժի կիրառման պրակտիկայում որոշ թերությունների մասին» որոշմամբ մեկ անգամ ևս դատարանների ուղղորդությունը հրավիրեց յուրաքանչյուր դեպքում տարբերել բարոյապես քայքայված շարժիտ հանցագործներին և այն անձանց, որոնք կատարել են հանցագործություն պատահական հանգամանքների բերումով, անթույլատրելի համարելով նրանց նկատմամբ միակերպ մոտեցումը:

Դատարանի առջև խնդիր է դրվում արձակել արդարացի դատավճիռ: Ինչպես իրավունքը, նույնպես և բարոյականությունը մարդկային վարքագիծը դիտում է արդարացիության տեսանկյունից: Այդ իմաստով կարելի է ասել, որ այն ինչ արդարացի է, պետք է համապատասխանի նաև բարոյականությանը: Ուստի չի կարող լինել դատարանի արդար դատավճիռ, որ կայացվի կոմունիստական բարոյականության նորմաներին հակառակ: Այսպիսով, ամփոփված ձևով կարելի է ասել, որ իրավական և բարոյական նորմաների փոխներգործությունը նպաստում է դատարանի կողմից արդար դատավճիռ կայացնելու գործին:

ՀՍՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 294-րդ հոդվածի 5-րդ կետը նշում է, որ դատավճիռը կայացնելիս դատարանը պետք է լուծի, թե հատկապես ինչ պատիժ պետք է նշանակվի ամբաստանյալի նկատմամբ, ամբաստանյալը արդյոք պետք է կրի այդ պատիժը և այն ուղղիչ աշխատանքային զաղութի տեսակը, որտեղ նա պետք է կրի պատիժը: Պատժաշափի ու պատժատեսակի հարցը մեղադրական դատավճիռ կայացնելիս հանդիսանում է ամենակարևոր հարցերից մեկը: ՍՍՀՄ և Միութենական հանրապետությունների քրեական դատավարության հիմունքների 43-րդ հոդվածը պահանջում է, որ դատարանը պարտավոր է մեղադրական ու արդարացման դատավճիռները պատճառաբանել, Քրեական դատավարության հիմունքներից էլ բխում է ՀՍՍՀ քրդատ. օր-ի 305 հոդվածի պահանջները. այն է՝ «մեղադրական դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասը պետք է բովանդակի այն մեղադրանքի ձևակերպումը, որը համարվել է սպառնացված, մատնանշելով կատարված հանցագործության վայրը, ժամանակը, կատարման եղանակը, շարժառիթը և հետևանքները. նշումներ յուրաքանչյուր ամբաստանյալի մեղքը որոշող հանգամանքների մասին. այն ապացույցները, որոնցով հիմնավորված են դատարանի եզրակացությունները և այն շարժառիթները, որոնք բացատրում են, թե ինչու դատարանը իր դատավճիռը հիմնում է հատկապես այդ ապացույցների վրա և ժխտում է մյուս ապացույցները. նշումներ պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների մասին. մեղադրանքի մի մասը հիմնավորված չլինելու դեպքում դրա հիմքերը»:

Դատարանը պարտավոր է նաև մեջ բերել մեղադրանքը փոփոխելու շարժառիթները, և թե այդպիսի փոփոխություններ կատարվել են դատարանում, իսկ անհրաժեշտ դեպքերում՝ ընտրված պատժամիջոցին վերաբերող շարժառիթները: Բացի դրանից, պետք է պատճառաբանվի ամբաստանյալին առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստ ճանաչելը, ամբաստանյալին պատժից ազատելը, պայմանական դատապարտություն կիրառելը, ինչպես նաև տվյալ հանցագործության համար քրեական օրենքով նախատեսված պատժի նվազագույն չափից ցածր պատիժ նշանակելը, կամ այլ, ավելի մեղմ պատժի անցնելը, կամ ընդհանուր կանոններից շեղվելով՝ ուղղիչ աշխատանքային զաղութի տեսակը նշանակելը: Եթե գործում կան մեկից ավելի ամբաստանյալներ, թվարկված նշումները պետք է անել ամբաստանյալների յուրաքանչյուրի նկատմամբ առանձին...»:



Այս հոդվածը ինքնին շեշտում է, թե որքան մեծ նշանակություն ունի դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասի կազմումը դատավճիռը կայացնելիս և թվով ու բովանդակությամբ որքան բազմապիսի հարցեր են առաջ զալիս դատավճռի այդ մասը կազմելիս: Այդ հավասարապես վերաբերում է նաև ընտրված պատժաչափին, պատժամիջոցին:

Պատժամիջոցը որոշելիս դատարանը պետք է ելնի այն բանից, թե ինչպիսի շարժառիթներով է կատարված հանցագործությունը: Հանցագործության շարժառիթների ճիշտ բնորոշումը օգնում է դատարանին դատավճիռը կայացնելիս պարզել հանցանքը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, բացի այդ, տալ հանցագործ ոտնձգության ճիշտ որակումը:

Մեր կարծիքով, պատժամիջոցի, պատժաչափի պատճառաբանությունը, նրա շարժառիթներին դատավճռում պետք է մեծ տեղ հատկացվի և դատարանը յուրաքանչյուր դեպքում այդ հարցում նույնպես պետք է ղեկավարվի քրեական դատավարության հիմունքների այն պահանջով, որ դատավճիռը անհրաժեշտ է ամբողջությամբ պատճառաբանել:

Հաշվի առնելով պատժամիջոցի, պատժաչափի պատճառաբանելու կարևորությունը մեղադրական դատավճռում և պրակտիկ տեսակետից մի քանի տարիներ մոտ կանգնած լինելով դատավարական աշխատանքին, մենք կցանկանայինք այս ուղղությամբ որոշ դիտողություններ անել և մեր կարծիքը հայտնել, նախապես նշելով, որ ամենևին նպատակ չունենք օրենքը քննադատելու, այլ ցանկանում ենք այդ հարցում ավելի պարզություն մտցնել:

Խոսքը վերաբերում է ՀՍՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 305-րդ հոդվածին, ՌՍՖՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 314-րդ հոդվածի այն մասին, որն ուղղված է պատժամիջոցը դատավճռում պատճառաբանելուն:

Քրեական դատավարության հիմունքների 43-րդ հոդվածում սլարդ նշված է դատավճիռը պատճառաբանելու անհրաժեշտության մասին: Այդ հավասարապես պետք է վերագրել նաև պատժամիջոցը պատճառաբանելուն: Միևնույն ժամանակ ՀՍՍՀ քր. դատ. օր-ի 305 հոդվածում, ՌՍՖՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 314 հոդվածում պատժաչափի պատճառաբանման մասում հստակություն չի մտցված: Այդ հոդվածներում նշված է, որ դատարանը պետք է պատճառաբանի ամբաստանյալին պատժից ազատելը, պայմանական դատապարտության կիրառելը, տվյալ հանցագործության համար քրեական օրենքով նախատեսված պատժի նվազագույն չափից ցածր պատժ նշանակելը: Հոդվածի այս մասը շարադրված է շատ պարզ, հստակ և անվիճելի, իսկ քրեական օրենսգրքի տվյալ հոդվածի սանկցիայի սահմաններում պատժ նշանակելու մասում, նշվում է, որ դատարանը պատժամիջոցը պատճառաբանել կարող է անհրաժեշտության դեպքում (ընդգծումը մերն է. տե՛ս մեր կողմից վերը բերված հոդվածի տեքստը): Թե ինչու է օրենսգրքը այս հարցում առաջ քաշում անհրաժեշտության և ոչ անհրաժեշտության հարցը, ինչ ի նկատի ունեն այս դեպքում ՀՍՍՀ քր. դատ. օր-ի 305 և ՌՍՖՍՀ քր. դատ. օր-ի 314 հոդվածները, մեր կարծիքով պարզ չէ:

Այս հարցում տեսականորեն մեր կարծիքն այն է, որ չպետք է դնել մեղադրական դատավճռում պատժամիջոցն ընտրելիս այն պատճառաբանելու անհրաժեշտության կամ ոչ անհրաժեշտության հարցը, անհրաժեշտ դեպքերի և ոչ անհրաժեշտ դեպքերի հարցը: Պատժամիջոցը բոլոր դեպքերում դատավճռում պետք է պատճառաբանվի: Այս հարցում մենք պաշտպանում ենք Ուկրաինական ՍՍՀ-ի քրեական դատավարության օրենսգրքի 334-րդ հոդվածի շարադրումը, որն ուղղակիորեն պարտավորեցնում է դատարաններին պատճառաբանելու ընտրված պատժամիջոցը, շարադրելու նշված պատժամիջոցն ընտրելու շարժառիթները:

Դատական պրակտիկան մեզ համոզում է, որ յուրաքանչյուր քրեական գործ լուծելիս պատժամիջոցի պատճառաբանումը սովելի համոզիչ է դարձնում դատավճիռը, բարձրացնում է դատավճռի դաստիարակչական, հասարակական-քաղաքական նշանակությունը:

Դատավճռում հանցանքը ծանուցնող և մեղմացնող հանգամանքների պատճառաբանությունը հիմնականում պայմանավորվում է քրեական օրենսդրության հիմունքների 33, 34 հոդվածներով: Հիմունքների 33-րդ հոդվածը դատարաններին իրավունք է վերապահում պատժամիջոցը դատավճռում պատճառաբանելիս բացի այդ հոդվածում նշված մեղմացուցիչ հանգամանքներից, հաշվի առնել նաև օրենքում չնշված մեղմացուցիչ հանգամանքներ: Իրերի դրությունը այլ է, երբ դատարանը պատժամիջոցը պատճառաբանում է ծանուցնող հանգամանքները դատավճռում շարադրելով: Հիմունքների 34-րդ հոդվածը թվարկելով հանցանքը ծանրացնող հանգամանքները, նշում է, որ Միութենական հանրապետությունների քրեական օրենսգրքերում կարող են նախատեսվել նաև հանցանքը ծանրացնող այլ հանգամանքներ:

Մի դեպքում իրավունք է վերապահված դատարանին հաշվի առնելու հանցանքը մեղմացնող այլ հանգամանքներ, իսկ մյուս դեպքում այդ մասին (34-րդ հ. ծանրացնող հանգամանքների



մասին) ոչինչ չի ասվում: Որոշ իրավագետներ և պրակտիկ աշխատողներ այն կարծիքն են հայտնում, որ դատարանը իրավունք չունի որևէ այլ ծանրացնող հանգամանք դատավճռում պատճառաբանի, բացի օրենքում նշված ծանրացնող հանգամանքներից: Մենք այդ կարծիքը չենք բաժանում և մեր աշխատանքի պրակտիկայում, դատավճիռներում, որպես հանցանքը ծանրացնող հանգամանք չենք խուսափել պատճառաբանելու այնպիսի մոմենտներ, որոնք օրենքում չեն թվարկված: Օրենքում չի ասվում, որ հանցանքը ծանրացնող հանգամանքները սպառիչ են, ուստի երբեմն դատավճիռներում, որպես ծանրացնող հանցանք, մենք շեշտել ենք օրենքում չլուծված ծանրացուցիչ հանգամանքներ. օրինակ՝ ամբաստանյալի հակահասարակական-պարագիտային կյանք վարելը, ինչպես նաև այլ հանգամանքներ:

Մեր կարծիքով, վատ չի լինի, եթե օրենսդիրը 34-րդ հոդվածում իրավունք վերապահի դատարանին շնախատեսված այլ ծանրացուցիչ հանգամանքներ հաշվի առնելու և պատճառաբանելու մեղադրական դատավճռում (այնպես, ինչպես շարադրված է 33 հոդվածում, մեղմացուցիչ հանգամանքները հաշվի առնելու դեպքում):

Դատավճիռը կայացնելիս դատարանը պարտավոր է լուծելու նաև մեկ այլ խումբ հարցեր, որոնց քննարկումը և լուծումը, շարադրումը դատավճռում այն դարձնում է ամբողջական, անթերի: Այդ հարցերն են.

1. Քաղաքացիական հայցը ենթակա է արդյո՞ք բավարարման, ում օգտին և ինչ չափով. պատճառված վնասը ենթակա է արդյո՞ք հատուցման, եթե քաղաքացիական հայցը չի հարուցված:

2. Իրեղեն ապացույցները, գրավված առարկաները տնօրինելը:

3. Ում վրա պետք է դնել օրենքով նախատեսված դատական ծախսերը:

4. Ամբաստանյալի նկատմամբ խափանման միջոցի հարցը:

Դատավճիռը կայացնելիս քր. օր-ի 231 հոդվածի պահանջներով դատարանը լուծում է ամբաստանյալին առանձնապես վտանգավոր ոեցիդիվիստ ճանաչելու հարցը:

Առանձին հոդվածով կարգավորվում է նաև դատավորի առանձին կարծիքի հարցը, որը շարադրվում է գրավոր և կցվում է գործին:

ՀՍՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ գլխում հատուկ հոդվածներ են առանձնացված դատավճռի կառուցվածքի հարցերին: Դատավճիռը բաղկացած է երեք մասից.

ա) ներածական մաս

բ) նկարագրական-պատճառաբանական մաս

գ) եզրափակիչ մաս

Մեղադրական դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասում շոշափվող հարցերի շուրջը մենք մեր կարծիքն արտահայտեցինք:

Դատավճիռների կառուցվածքին վերաբերող մյուս բոլոր հարցերը կարգավորվում են ՀՍՍՀ քր. դատ. օր-ի 303—308 հոդվածներով: Անդրադառնալով միայն արդարացման դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասին վերաբերող հարցերին:

Քրեական դատավարության հիմունքների 43-րդ հոդվածում շարադրված են այն դեպքերը, երբ պետք է կայացվի արդարացման դատավճիռը: Դրանք են.

1. Երբ չի հաստատված հանցագործության դեպքը:

2. Երբ ամբաստանյալի արարքում բացակայում է հանցակալմը:

3. Երբ ապացուցված չէ ամբաստանյալի մասնակցությունը հանցագործության կատարմանը:

Արդարացման դատավճռում, նրա նկարագրական-պատճառաբանական մասում անհրաժեշտ է հետևյալ հարցերի շարադրումը. մեղադրանքի էությունը, որով դատի է տրվել մեղադրյալը, դործի այն հանգամանքները, որ պարզել է դատարանը, բերվում են ամբաստանյալի արդարացման հիմնավորումները, նշելով այն շարժառիթները, որոնք բացատրում են, թե դատարանը ինչու է մերժում մեղադրանքը հիմնավորող ապացույցները: Օրենքը կատեգորիկ կերպով արգելում է արդարացման դատավճռում մտցնել այնպիսի ձևակերպումներ, որոնք կասկածանքի տակ են դնում արդարացվածի անմեղությունը:

ՀՍՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 303-րդ հոդվածը պահանջում է, որպեսզի դատավճիռը կազմված լինի պարզ, հասկանալի արտահայտություններով:

Դատարանների գործունեությունը խիստ կապված է աշխատավորների դաստիարակության հետ, իսկ դատարանի դաստիարակչական նշանակությունը շատ բանով կախված է դատական աշխատանքի կուլտուրայից: «Դաստիարակը պետք է դաստիարակված լինի» թեզը լրիվ պետք է արածել սովետական դատավորների գոծունեության, աշխատանքի ոճի ու կուլտուրայի հարցերի վրա:

Դատարանը պետք է լինի բարձր կուլտուրայով օժտված օրգան։ Իսկ այդպիսի կուլտուրայի առկայության մասին հնարավոր չէ խոսել, եթե բացակայում է գատական փաստաթղթերը կազմելու կուլտուրան։ Այն դատավճիռը, որը կազմված է օրենքի բոլոր պահանջներին համապատասխան, համոզում է ընթերցողին, նրա հետ առնչվող բոլոր մարդկանց այդ դատավճռի ճշտությունն ու իսկությունը։ Զպատճառարանված, անփույթ կազմված դատավճիռը խափանում է այն կայացնող դատարանի հեղինակությունը, նսեմացնում էրա դաստիարակչական դերը։

Անվիճելի է, որ ոչ ճիշտ ձևակերպված, անփույթ կազմված դատավճիռը կարող է ոչնչի հանգեցնել նույնիսկ ամենափայլուն կերպով վարած գատական պրոցեսը։

Ամեն անգամ դատավճիռ կայացնելիս դատարանը չպետք է մոռանա, որ այն սոցիալիստական արդարադատության կարևորագույն ակտ է, որը հրապարակվում է հանուն Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության, կամ հանուն Սովետական Սոցիալիստական Միութենական Հանրապետության։